ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

Լենտեքս ՍՊԸ-ն ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-25/06 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը
3	Ապրանքները պատրաստվում են Հայաստանի Հանրապետության կառավարության 20.12.2018թ. N 1517-Ա որոշմամբ հաստատված չափորոշիչներին և ձևերին (նկարներին) համապատասխան: Գլխարկ պիլոտկա (կանացի)՝ գլխարկանշանով (Ձև 4): Պատրաստվում է մուգ կապույտ գույնի կիսաբրդյա գործվածքից (67% բուրդ, 33% պոլիեսթեր, 317 գ/մ2 խտությամբ), բաղկացած երկարացված հատակի 2 մասից, 2 պատից և կենտրոնական մասում իրար վրա ծալվող 2 փեշիկից: Վերծալված եզրակարերը մուգ կարմիր գույնի են (2581 արտիկուլի մահուդե կտորից) և ձախ կողմում ունեն 3 օդանցք: Աստառը պատրաստվում է բնական մետաքսից (8-C5-ВШ արտիկուլից մուգ կապույտ կտորից 100 գ/մ2 խտությամբ), իսկ ներսի ժապավենը բնական կաշվից՝ 30 մմ լայնությամբ: Առջևի կենտրոնական մասում ամրացվում է գլխարկանշանը (նշված որոշմամբ սահմանված պահանջներին համապատասխան (Ձև 5)), որը նախապես (մինչև մատակարարումը) համաձայնեցվում է Գնորդի հետ: Պիլոտկաները ներսամասից պետք է ունենան պիտակ, որի վրա պետք է նշված լինի դրանց չափը: Նախքան պիլոտկաների պատրաստումը պիլոտկաների գունային գամման համաձայնեցվում է Գնորդի հետ: Պիլոտկաների ամբողջ քանակը պետք է պատրաստվի միևնույն գործվածքից: Ընդ որում, նախապես (մինչև պիլոտկաների կարելը) Վաճառողը Գնորդին է ներկայացնում նշված գործվածքի բաղադրության, կարգի, ներկի կայունության և մակերեսային խտության վերաբերյալ ՀՀ-ում հավատարմագրված կազմակերպության կողմից տրված լաբորատոր հետազոտության եզրակացություն: Ապրանքների փաթեթավորումը՝ պոլիէթիլենային թափանցիկ պարկերով, պիտակավորված, պիտակների վրա պետք է նշված լինեն ապրանքի անվանումը, քանակը, չափսերը: Ապրանքների

	տեղափոխումն ու բեռնաթափումը իրականացնում է Վաճառողը՝ իր միջոցների հաշվին, նախապես Գնորդի հետ համաձայնեցնելով մատակարարման կոնկրետ հասցեն:

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

ООО Лентекс в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-25/06 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар
	технические характеристики
3	